



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Գիտաժողովը նվիրված է ԵՊՀ
հիմնադրման 95-ամյակին և
Փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակի



Երիտասարդ-հոգեբանների
միջբուհական գիտաժողով

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԻԼՍՈՓԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՐԱԼՈՒԹՅԱՆ ԾԱԿՈՒԼՏԵՏ

Երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողով
Գիտաժողովը նվիրված է ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և Փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ



23-25 մայիսի, 2014թ.
Երևան

Գիտաժողովի կազմակերպիչներ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ և
ԲՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԵՊՀ ՓՈՒՍՈՓՈՒԹՅԱՆ և
ՀՈԳԵՐԱԼՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Գիտաժողովի ֆինանսական աջակիցներ



ՀՀ ՆԱԽԱԳԱՆԻ ՀՈՒՍԱՆՈՒ
ՆԵՐՔՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆ և
ԲՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿՐԱՄ



ՀՀ ՄՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՆԱՐԴՈՒ
ՓՈՒՍՈՓՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՐԱԼՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երիտասարդ հոգեբանների միջուկային գիտաժողով
(գիտաժողովը նվիրված է ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և Փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին)

ԳՐԱԺՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

23-25 մայիսի, 2014թ.

Երևան

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ФИЛОСОФИИ И ПСИХОЛОГИИ

Научная межвузовская конференция молодых психологов
(конференция посвящена 95-летию основания ЕГУ и 50-летию основания
факультета философии и психологии)

МАТЕРИАЛЫ КОНФЕРЕНЦИИ

23-25 Мая, 2014г.

Ереван

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF PHILOSOPHY AND PSYCHOLOGY

The Inter-University Scientific Conference of Young Psychologists

(The conference is dedicated to the 95th anniversary of the founding of YSU and the
50th anniversary of the founding of Faculty of Philosophy and Psychology)

PROCEEDINGS

May 23-25, 2014

Yerevan

ՀՏԴ 159.9.06
ԳՄԴ 88
Է 859

Երաշխավորվել է տպագրության
ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
կողմից 2014թ. ապրիլի 23-ի՝ գիտական խորհրդի
նիստի թիվ 7 արձանագրությամբ

ՆՄՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՀՈՒՐԴ

Ավանեսյան Հ.Մ., հ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ
Բաղդասարյան Ա.Ս., փ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
դեկան

Հարությունյան Ս. Ֆ., հ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոն
Խաչատրյան Ն. Գ., հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ
Հովհաննիսյան Հ. Ռ., հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոն
Հովհաննիսյան Ս. Վ., հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոն
Ստեփանյան Լ.Ս., կ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոն

ԿԱԶՄԿՈՍՒՄԵ

Հովհաննիսյան Հ. Ռ.
Հովհաննիսյան Ս. Պ.
Գրիգորյան Ս. Վ.
Հակոբյան Ռ. Գ.
Սարգսյան Ռ. Ա.
Հակոբջանյան Ա. Ռ.
Մնացականյան Բ. Ն.

Է 859 Երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողովի կյութեր, «Հոգատար բարեկամ»
բարեգործական հասարակական կազմակերպություն / Խմբագրական կազմ.- Երևան,
«Հոգատար բարեկամ» բարեգործ. հ/կ, 2014.-184 էջ:

Սույն ծաղուվածուս ներառում է Երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողովի
գեկուպների կյութերը, որը տեղի է ունեցել 2014թ. մայիսի 23-25-ին՝ Երևանի պետական
նախադարձում: Գիտաժողովը նվիրված էր ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և Փիլիսոփայության
և հոգեբանության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին:

ՀՏԴ 159.9.06
ԳՄԴ 88

ISBN 978-9939-1-0023-4

© «Հոգատար բարեկամ» բարեգործ. հ/կ, 2014

Հակոբջանյան Ա. Ռ.
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ
Հայցորդ, ԵՊՀ

Հանգուցային բաներ, առողջությանն առնչվող վարք, պլանավորված վարքի տե-սություն, ցայտուն համոզմունքներ:

Ժամանակակից գիտական ուղղություններից մեկի՝ առողջության հոգեբանության շրջանակներում հիմնարար է առողջության ու հիվանդության ընկալումը, այն պատկերացումները, թե ինչ են մարդիկ մտածում իրենց առողջության մասին և ինչպես են վերաբերում հիվանդությանը: Այդպիսի մտքերը կապված են առողջության ու հիվանդության վերաբերյալ ունեցած համոզմունքների հետ: Ընկալումները, մտքերն ու համոզմունքներն իրենց հերթին ընկած են դրսևորվող վարքի հիմքում: Այսպիսով՝ առողջությանն առնչվող վարքն անհրաժեշտ է ուսումնասիրել և հասկանալ դրա հիմքում ընկած գործոնների (կոգնիցիաների) միջոցով: [4]

Առողջությանն առնչվող վարքաձևերը կարող են տարբեր լինել, սակայն հա-մեմատելով դրանք առողջության հոգեբանության ընդհանուր նպատակների հետ՝ օրինաչափ է, որ այդ վարքի ուսումնասիրություններն ու վարքաձևերի հետ իրականացվող միջամտություններն ուղղված են առողջության պահպանմանը, բարելավմանն ու բարեկեցության ապահովմանը:

Առողջությանն առնչվող վարքի ուսումնասիրություններում առավել հաճախ կիրառելի են համարվում չորս հիմնական մոտեցումներ ու տեսություններ: Իրանք են առողջության վերաբերյալ համոզմունքների մոդելը (health belief model), պլանավորված վարքի տեսությունը (theory of planned behavior), սոցիալ-կոգնիտիվ տե-սությունը և տրանստեսական մոդելը (the transtheoretical model): [2, 5]

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության նպատակը առողջ վարքա-ձևերն ուսումնասիրող հարցաբանի մշակումն է պլանավորված վարքի տեսության (Icek Aizen, 1985) հիման վրա:

Պլանավորված վարքի տեսության հիմքում գիտակցված գործողու-թյունների տեսությունն է (theory of reasoned actions), [1] որն է հակադրություն ռադիկալ բիենիորիզմի, փաստում է, որ մարդկանց գոր-ծողությունները ոչ թե հիմնվում են խրախուսանքով ու պատժով ամրա-պնդման վրա, այլ վարքին նախորդում են գիտակցական մտադրությունները, վարքը ղեկավարվում է բարձրագույն մտային գործընթացներով: [1, 2]

Ըստ պլանավորված վարքի տեսության՝ մարդկանց վարքը պայմանավորված է երեք տիպի համոզմունքներով. վարքի սպասվող արդյունքների ու դրանց գնա-հատման վերաբերյալ համոզմունքներով

(վարքային համոզմունքներ), նշանակալի անձանց սպասելիքների վերաբերյալ համոզմունքներով և այդ սպասելիքներին համապատասխան գործունեություններով (նորմատիվ համոզմունքներ) և վարքը խթանող կամ խոչընդոտող գործոնների առկայության վերաբերյալ համոզմունքներով ու այլ գործոնների ուժի ընկալմամբ (վերահսկման համոզմունքներ):

Այս համոզմունքներից յուրաքանչյուրն իրենց հերթին ձևավորում են բնութագրական խմբեր, որոնք ազդում են վարքի մտադրության վրա: Վարքային համոզմունքները ձևավորում են վարքի իրականացման բարենպաստ կամ անբարենպաստ դիրքորոշումներ, նորմատիվ համոզմունքները ձևավորում են սոցիալական ճնշման արդյունքում սուբյեկտիվ նորմը, իսկ վերահսկման համոզմունքները ձևավորում են ընկալվող վարքային վերահսկումը: Դիրքորոշումների, սուբյեկտիվ նորմի ու ընկալվող վարքային վերահսկման համադրումն ընկած է վարքի իրականացման մտադրության հիմքում: Որպես կանոն, որքան բարենպաստ են դիրքորոշումներն ու սուբյեկտիվ նորմը և որքան մեծ է ընկալվող վարքային վերահսկողությունն, այնքան ավելի մեծ է տվյալ վարքն իրականացնելու անկող մտադրությունը: Ունենալով ներկա վարքի վերահսկողության բավարար մակարդակ՝ մարդիկ հակված են համապատասխան հնարավորության դեպքում իրականացնելու մտադրությունները [1]:

Այսպիսով, պլանավորված վարքի տեսության հիմնարար գաղափարն այն է, որ վարքը կարելի է կանխատեսել մտադրություններով:

Իբրև մեթոդաբանական հիմք ընդունելով պլանավորված վարքի տեսությունը որևէ վարքաձևի ուսումնասիրման համար, անհրաժեշտ է մշակել տվյալ վարքին համապատասխան հարցարան: Հարցարանի մշակման գործընթացը ենթադրում է տվյալների հավաքագրման երկփուլ աշխատանք: Քանի որ պլանավորված վարքի տեսության համաձայն վարքի կանխատեսումը հնարավոր է մտադրությունների մակարդակով, իսկ այդ մակարդակը որոշվում է նախորդող բաղադրիչների բարենպաստ արտահայտվածությամբ, ապա հարցարանը կազմելիս ևս հաշվի են առնվում տեսությանը առանձնացված բոլոր բաղադրիչները: Առաջին փուլում հետազոտվողների ներկայացուցչական ընտրանքի համար կազմվում են հարցեր լատին համապատասխան կառուցամասերի.

- ցայտուն համոզմունքների բացահայտում
- վարքային վերջնարդյունքների բացահայտում
- նշանակալի անձանց բացահայտում
- վարքի իրականացման համար խոչընդոտների ու նպաստող գործոնների բացահայտում:

Վերոնշյալ կառուցամասերին համապատասխան հարցերին տրվող պատասխանները ենթարկվում են կոնտենտ վերլուծության, որի արդյունքում ստացված տվյալներն օգտագործվում են հիմնական հարցարանի հարցերը կազմելիս (երկրորդ փուլ): Հիմնական հարցարանն արդեն ներառում է տեսական մոդելին համապատասխանող բոլոր կառուցամասերը: [3]

Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն էր մշակել հարցարան առողջությանն ուղղված երեք վարքաձևերի (առողջ սևվելու, ծխելը թողնելու և ֆիզիկական վարժություններ անելու) ուսումնասիրման համար:

Ստորև կներկայացնենք առաջին փուլով հավաքագրված տվյալների արդյունքները: Ստացված տվյալների կոնտենտ վերլուծությունը ցույց տվեց, որ 18-55 տարեկան անձանց շրջանում առողջ սևվելու հարցում առավել ցայտուն համոզմունքները, որոնք կապվում են տվյալ վարքի իրականացումից սպասվող արդյունքների (վարքային վերջնարդյունքներ) հետ, երկարաթև կեցության, ավելորդ քաշ չունենալու, գեղեցիկ կազմվածք ունենալու վերաբերյալ համոզմունքներն են: Ծխելը թողնելու հարցում այդպիսի համոզմունքների շարքին են դասվում այլ հիվանդությունների կանխարգելումը, առողջ սիրտ-անոթային համակարգ ունենալը, առողջ թոքեր և շնչառություն ունենալը: Հատկանշական է, որ ծխելը թողնելու որպես առողջության պահպանմանն ուղղված վարքի դրսևորման համոզմունքային հիմքը խուսափողական վարքի միտում ունի (չունենալ այլ հիվանդություններ, կանխարգելել քաղցկեղի առաջացումը): Ֆիզիկական վարժություններ անելու հիմքում ընկած ցայտուն համոզմունքներից են գեղեցիկ կազմվածք ունենալու, ճկունության, ժամանակատար լինելու վերաբերյալ համոզմունքները:

Առողջությանն ուղղված նշված երեք վարքաձևերի պարագայում էլ նշանակալի մարդիկ, ում խորհրուրդը, կարծիքը կարևոր է և դրդապատճառ է հանդիսանում այդ վարքն իրականացելու համար, ավելի հաճախ ձևողներն ու ընկերներն են, առանձին դեպքերում նաև՝ բժիշկները:

Վարքի իրականացման խոչընդոտների ու նպաստող գործոնների կոնտենտ վերլուծության արդյունքում առողջ սևվելու գործոնները բաժանվեցին սոցիալ-տնտեսական և կամային բաղադրիչների, իբրև հիմնական նպաստող կամ խոչընդոտող գործոններ են նշվում գումարը, ժամանակը, կամքի ուժը: Ծխելը թողնելու հարցում իբրև նպաստող ակնհայտ մեծամասնություն է կազմում առողջական խնդիրներ ունենալու գործոնը, այնուհետև կամային ու ցանկության գործոնները: Ինչպես տեսնում ենք, ծխելը թողնելու համար գործոնների շարքում ևս գե-րակա է խուսափողական միտումը, այսինքն՝ տվյալ պարագայում ծխելը թողնելը ոչ թե առողջությանն ուղղված վարքաձև է, այլ հիվանդությունից խուսափման: Ֆիզի-կական վարժություններ անելու համար ևս հիմնական է ժամանակի գործոնը, կամքը, ինչպես նաև որպես խոչընդոտող գործոններ՝ ծուլությունը և դրանց նշանակություն չտալը:

Ինչպես արդեն նշել ենք, առաջին փուլով իրականացված ուսումնասիրության արդյունքում ստացված կոնտենտ վերլուծության արդյունքները կիրառվում են հիմնական հարցարանը կազմելու համար: Մասնավորապես, կոնտենտ-խմբավորումներն օգտագործվում են որպես առանձին հարց-պնդումներ՝ ստանդարտ հարցարանի բոլոր կառուցամասերի համար: Պնդումները գնահատվում են ըստ Լայկերտի սանդղակի:

Ստանդարտ հարցարանի մշակման երկրորդ փուլը ենթադրում է գործիքի ներքին վալիդության ստուգում:

Նշենք, որ պլանավորված վարքի մոդելը կիրառվում է ինչպես իբրև հետազոտական հիմք, այնպես էլ նպատակատղոված է որոշակի վարքաձևերի փոփոխության ամրապնդմանը: Այս տեսության մեթոդաբանական հիմքով ստեղծված հարցարաններն անհրաժեշտ են փոփոխելի վարքի հիմքում ընկած սոցիալ-կոգնիտիվ գործոնները վերհանելու համար:

Գրականություն

1. Ajzen Icek, The Theory of Planned Behavior/ P. A. M. Lange, A. W. Kruglanski & E. T. Higgins (Eds.), Handbook of theories of social psychology, 2012, (Vol. 1, pp. 438-459).
2. Colleen A. Redding, Joseph S. Rossi, Susan R. Rossi, Wayne F. Velicer, James O. Prochaska, Health Behavior Models, The International Electronic Journal of Health Education, 2000; 3 (Special Issue): 180-193.
3. Fishbein, M., & Ajzen, I. Predicting and changing behavior: The reasoned action approach, 2011, 538p.
4. Forshaw Mark, Essential Health Psychology, Oxford University Press, 2002, 236p /16
5. Hayden Joanna, Introduction to Health Behavior Theory, Jones & Bartlett Learning, 2009, 148p./18

CONSTRUCTING A HEALTH BEHAVIOR QUESTIONNAIRE (BASED ON THEORY OF PLANNED BEHAVIOR)

*Hakobjanyan A.R., PhD student,
Faculty of Philosophy and psychology, YSU*

Key words. Health Behavior, Theory of Planned Behavior, Salient Beliefs, Questionnaire Construction.

Various theories of health behavior change are inherently linked to the measurement of it. Theoretical models fundamentally guide both our current and future understanding of health behavior, as well as providing direction for our research and intervention development. According to the Theory of Planned Behavior, behavior is influenced by the intention to perform the behavior. Predicting behavior is the ultimate goal of this theory. There is no standard TPB questionnaire: formative research has been conducted to construct a questionnaire suitable for the behavior and population of interest.